

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

### *2018 թվականի երկրորդ եռամսյակում Սյունիքի մարզպետարան մուտք գործած և առաքված փաստաթղթերի վերաբերյալ*

2018 թվականի երկրորդ եռամսյակում մարզպետարան է մուտքագրվել՝ 2617 թղթակցություն, առաքվել՝ 1848 փաստաթուղթ: Այդ թվում ստացվել է ՀՀ կառավարությունից և վարչապետից՝ 393, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից՝ 332, մարդու իրավունքների պաշտպանից՝ 3, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայություններից և այլ կազմակերպություններից՝ 575, տեղական ինքնակառավարման մարմիններից՝ 810, գաղտնի թղթակցություն՝ 30, քաղաքացիներից՝ 475 դիմում: ՀՀ կառավարությունից և վարչապետի աշխատակազմից մարզպետարան է վերահասցեագրվել 35, ՀՀ նախարարություններից՝ 9, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանից՝ 2 դիմում:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը. ամսական մեկ անգամ մարզկենտրոնում (յուրաքանչյուր ամսվա վերջին երկուշաբթի օրը) կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Բացի այդ, քաղաքացիների ընդունելություն է կատարվել նաև մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ: 2018թ. երկրորդ եռամսյակում կատարվել է 119 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները քաղաքացիների ընդունելությունը կազմակերպել են ամենօրյա, աշխատանքային կարգով:

Քաղաքացիների ընդունելության, նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին հաշվետվությունը և այդ աշխատանքների վիճակի մասին ամփոփ տեղեկատվությունը սահմանված պարբերականությամբ ներկայացվել է ՀՀ կառավարություն ու ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: